ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» ապրիլի 2025թ. N 49-Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ստեղծված որակավորման հանձնաժողովի 2025 թվականի մարտի 31-ի նիստի N 59 արձանագրությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից 2025 թվականի մարտի 26-ի հայտով ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված «Միաձույլ երկաթբետոնե կրող համակարգերով շենքերի սեյսմակայուն շինարարության առանձնահատկությունները» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 24 կրեդիտ:

2. Միջոցառումը նախատեսվում է իրականացնել երկու խմբերի համար հետևյալ ժամկետներով՝

1) 1-ին խումբ՝ 2025 թվականի ապրիլի 14-25-ը,

2) 2-րդ խումբ՝ 2025 թվականի հունիսի 9-20-ը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.04.2025

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ